ՏԵՂԵԿԱԳԻՐ Թ. 4.

Գիւղատնտեսական մասին Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի վասն Յունիս ամսոյ 1906 ամի:

Ծառայողներ, բանւորներ և արհեստաւ.	Թիւ ծառայ.	Քանի՞ օր ծառայել է	Ինչ է վճարուած Ր.	Կ.
Կառավարիչ	1	30	150	—
Վերակացու	3	90	38	—
Խոհարար	1	30	7	50
Վազի մշակութեան և գինեգործ.	64	616	274	90
Անտառի	4	120	28	—
Հացաբոյսերի մշակութեան	9	270	70	60
38½ խալվար տեղ (77 դեսետին) ցորեն ու գարի հնձելու փողրաթով	»	»	561	50
Բամբակի մշակութեան	7	50	15	—
Խոտահարք՝ ղօրուղ, անտառ, այգիներ	121	1149	582	45
Բանջարանոցի	9	34	10	35
Ձիապահութեան	6	180	54	50
Պայտառի	»	»	15	—
Տաւարապահութեան և կաթնատնտես.	11	330	69	—
Ոչխարապահութեան	21	164	53	38
Շինութեանց՝ խառատի	5	100	59	90
Որմնադրի	1	26	20	80
Աղիւսի 5000 հ.	»	»	11	—
Մշակների	12	106	59	55
Այգիներում 104 սաժէն երկայն և մի արշին բարձր պատ շինելու	»	»	52	—
Գոյք՝ գութանի խոփերի			4	80
Տնտեսական ծախքեր՝ այլ և այլ			16	88
» աթար թխելու հաշուի մնացորդ			85	—
» ամսականով աթար թխողների	2	60	15	—
» ծխան հաւաքողների	17	33	5	55
Ընդամեն	294	3388	2260	66

Ծանօթութիւն. Յունիսի հաշուի մէջ մտել են և յուլիս մինչ 10 եղած ծախքերից։

Ագարակի անասունները։	Քանի կար տարեսկզբին.	Ծնած կամ առնված	Սատկած կամ կորցրած	Մնացել
Կառքի և սայլի ձիեր	11	1	—	12
Հեծնելու ձիեր	10	—	—	10
Մատակներ	5	—	—	5
Քուռակ որձ 1 տար.	1	—	—	1
» ծնունդ 1906 թ.	2	—	—	2
Ավանակ	3	—	—	3
Գոմեշներ լծկան	25	—	—	25
Գոմշակովեր կթի և ցամաքած	36	—	—	36
Գոմշաձագ 1 տար.	23	—	—	23
» 2 տ.	14	—	—	14
Ծնունդ 1906 թ.	14	3	—	17
Եզներ լծկան	24	—	1	23
Կովեր կթի ու ցամաքած	18	—	—	18
Հորթեր 1 տար.	16	—	—	16
« » 2 տ.	2	—	—	2
Ծնունդ 1906 թ.	13	3	—	16
Ընդամեն	217	6	1	223

Կաթնատնտեսութիւն	Պ.	Փ.	ընդամեն Պ.	ընդամեն Փ.
Մուտք				
13 Կովերից ստացուել է կաթ	69			
23 Գոմշակովերից	131	28	200	28
Ելք				
Պատրաստուել է իւղ 5 պ. 8 փ. որի համար գնացել է կաթ	102	20	—	
Տրուել է վեհարանին, միաբանութեան, հիւրատան և ծառայողաց կաթ	14	20		
Մածուն	83	28	200	28

Մթերանոց	Պ.	Փ.
Մուտք		
Ստացուել է 25 զոլոտնիկ շերամի սերմից բոժոժ	4	20
Ամբար թխել են վանքի համար	189,000	հատ

Գինետուն։	վեդ.	շիշ.	Ընդամեն վ.	Ընդամեն շ.
Մուտք				
Գինի մնում էր առ 1-ն Յունիսի	—	—	1526	8
Քացախացու 1905 թուից	96	—		
Ելք				
Բաց է թողուած միաբանութեան հիւրատան, վեհարանին, ծառայողաց ճեմարանին ևն.	66	14		
Ծախուած է 54 ր. 05 կ.	21	—		
Գլխները լցնելու	3	4		
Տականք	1	—	92	2
Քացախացու բաց է թողուած մառանին	50	—		
Մնում է առ 1 Յուլիսի գինի	—	—	1434	6
» Քացախ	—	—	46	—

Դրամարկղ	Ր.	Կ.	Ընդամեն Ր.	Ընդամեն Կ.
Մուտք				
Մնացել է առ 1-ն յունիսի	390	86		
Ստացուել է վանական կառավ.	2642	51	3033	37
Ելք				
Ծախսուել է յունիսին	2260	66		
Մնում է առ 1-ն յուլիսի	772	71	3033	37

Նկատողութիւններ

Յունիս 6-ից սկսուել է խոտի հունձը զօրուղի, անտառի և այգիների։ Ունեցել ենք 2 հնձող և մի հաւաքող մեքենաներ։ Հնձող մեքենաներից մին բանել է 18 օր, միւսը 10 օր. ընդամեն 28 օր, օրական մօտ 4 դես. տարածութիւն կամ ընդամեն 112 դեսեատին։ Թէ մեքենաներով հնձուած խոտը հաւաքելու, թէ նստած խոտերը դերանդիով հնձելու և թէ թուփակներ դնելու բանել են 531 բանւոր, որոնց վճարուել է 262 ր. կամ դեսեատինին 2 ր. 34 կոպ.։

Անտառում հնձել են 8 թալայ, կամ 12 դեսեատին, դերանդով, բանել են 248 բանւոր, վճարել ենք 124 ր. 50 կ. կամ դեսեատինին 10 ր. 37 կոպ. այդ խոտը հաւաքուել է ձեռքի եղանով և խուրձեր կապոտուել։

Ղռի այգում հնձել են 10 դես. տեղ դերանդով 137 օր, վճարուել է 81 ր. 10 կոպ. կամ դեսեատինին 8 ր. 11 կոպ.։

Լուսաբար, Օղուզ, Թումիան այգիներում ընդամեն 14 դեսեատին տեղ հնձել են 223 բանւոր, վճարուել է 114 ր. 85 կ. կամ դեսեատինին 8 ր. 20 կ.։

Յունիս 12-ից սկսուել է հունձը։ 1905/1906 թուի վարը եղել է 5 խալվար (10 դես.) դարի և $33^1/_2$ խալվար (67 դես.) ցորեն. ընդամեն 77 դես.։ Հնձելավարձ տուել ենք փողով 561 ր. 61 կոպ. նիւթեղէնով՝—հաց, միս, իւղ, բրինձ ևն. 165 ր. ընդամեն 726 ր. 60 կոպ. կամ ամեն մի դեսեատինին 9 ր. 44 կոպ.*)։

---

*) Մեր բերել տուած հնձող—կապող մեքենան Մակ Կորմիկի բան չձգեցինք այս տարի, ջրելը հեշտացնելու համար արտերի մէջ բարձր ու մօտ մօտ թմբերի համար, որ արդելք էր լինում մեքենային և դարման չտա թողում, առաջիկայ տարին այդ աւանդական ձևը կփոխենք և կյարմարեցնենք մեքենայով հնձելու։

Հնձւորի օրավարձն էր 70 կոպ. միւս բանւոր մշակներին 45—60 կոպ.։

Այգիներում յօտել են աւելորդ շիւերը, դաղձը մաքրել և քաղհանել։

Շերամապահութիւնը սերմի վատառողջ լինելու պատճառաւ անյաջող էր. երրորդ քնից յետոյ երևաց պեբրին և ֆլաշրի հիւանդութիւնները, որ գնալով վերջին շրջանում այնպէս զարգացաւ, որ փչացրեց գրեթէ 3/4 մասը։ Շերամապահութեան ընթացքում ճեմարանի աշակերտներից քչերը քննութեանց պատճառաւ գործնականապէս ծանօթացան շերամապահութեան հետ։ Վերջերը միայն մի դասախօսութիւն եղաւ շերամապահութեան մասին, ուր մէջ բերուեցաւ նրա պատմական անցեալը, ներկայ դրութիւնը, շերամի որդի խնամքը, նրա հիւանդութիւնները են։

Աշակերտներին յունիսին ծանօթացրինք և հնձող մեքենաների հետ և թէ այս ու այն ձև պատուաստ անելու հետ։

Այգիները ազատ են օիդիում և միլդիու հիւանդութիւններից, միայն Լուսարար և Թումեան այգիներում երևում է դաղձը (ծորճինճին, повилика, cuscute)։

Եղանակը անձրևների պատճառաւ հով է։

Ամենաբարձր ջերմութիւնն էր 24^0 R.

Ամենացած 12^0։

Միջին տաքութիւնը առաւօտեան 15^0

կէսօրին $22\frac{1}{2}^0$

Երեկոյեան $18\frac{1}{2}^0$.

Անձրևներ եկել են 3-ին, 5, 13, 14, 16, 18, 21, 22.

Քամիները սովորական։

Գիւղ. Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց